ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2016- 13.01/28
13.01.2016 թ.

ՀՀ ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովի նախագահ
Վահան Բաբայանին

ԴԻՄՈՒՄ

(ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Շուշան Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին)

1.Դեպքի նկարագրություն.

2016թ. հունվարի 11-ին www.armtimes.com[1] կայքում հրապարակվել է ««Լսի, այ լակոտ, աչքերդ կհանեմ» Շուշան Պետրոսյան» վերնագիրը կրող նյութը:

Վկայակոչված լրատվական միջոցը նշում է, որ ֆեսբուքյան օգտատեր Գայանե Շահինյանի գրառմանն իր պատասխան ՀՀ ազգային ժողովի հանրապետական կուսակցության պատգամավոր Շուշան Պետրոսյանը հրապարակայնորեն պատասխանել է՝ «Լսի այ լակոտ, գրածներդ կարդացի ու գրածիդ այն 16 հավանություն տվող կենդանիներին էլ տեսա, ուշադիր լսի, չհամարձակվես այդ գարշելի երախդ բացել ու նման էժան ու հավուղեղ մակարդակի արտահայտվել Երկրիս, մեր բանակի, մեր Պաշտպանության Նախարարի մասին, ուշադիր լսի, աչքերդ կհանեմ ու ոնց ուզում ես արձագանքի, ԼԱԿՈՏ, կրկնում եմ աչքերդ կհանեմ !!!!»:

2. Իրավական հիմնավորումներ պատճառաբանություններ և պահանջ.

Օրենսդիր մարմնի ներկայացուցչի կողմից նման վարքագի դրսևորումը անհամատեղելի է բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի նորմերի հետ, քանի որ Ազգային ժողովի պատգամավորը պետք է հարգալից վերաբերմունք ցուցաբերի հանրության նկատմամբ, պարկեշտ և օրինակելի լինի՝ ոչ միայն պատգամավորական լիազորությունները իրականացնելիս, այլ նաև ամենօրյա կյանքում:

«ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի» 6-րդ հոդվածի 1-ին մասի ա. 3-րդ կետի համաձայն պադգամարը պարտավոր է պահպանել պադգամարի էթիկայի կանոնները:

1. http://armtimes.com/hy/read/77285

Նույն օրենսգրքի 6.1-րդ հոդվածը կարգավորում է պատգամավորի էթիկայի կանոնները: Կանոնները վերաբերվում են և պատգամավորական լիազորությունները իրականացնելիս և պատգամավորի ամենօրյա վարքագծին:

Այսպես՝ վկայակոչված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատգամավորի էթիկայի կանոններն են՝ ա) հարգել օրենքը և ենթարկվել օրենքին, բ) հարգել հանրության բարոյական նորմերը, դ) իր լիազորություններն իրականացնելիս չառաջնորդվել իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով, ե) չօգտագործել պատգամավորի պաշտոնի հեղինակությունը ի շահ իրեն կամ այլ անձի, զ) իր գործունեությամբ նպաստել Ազգային ժողովի նկատմամբ վստահության եւ հարգանքի ձևավորմանը, է) ամենուր և ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսևորել պատգամավորին վայել վարքագիծ, ը) հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, ինչպես նաև բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս:

Վերը նշվածից հետևում է, որ պատգամավորները պարտավոր են հետևել օրենքով սահմանված էթիկայի նորմերին և պահպանել դրանք, սակայն սույն դեպքում Շ. Պետրոսյանի կողմից չի պահպանվել, վերջինիս կողմից հրապարակային հայտարարություններն իրենց մեջ պարունակել են բռնության և սպառնալիքի կոչեր, ինչպես նաև վիրավորական արտահայտություններ, որն իր հերթին չի նպաստում Ազգային ժողովի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը խախտում է օրենքով սահմանված կանոնները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ «Ազգային Ժողովի կանոնակարգ» օրենքի՝ 6-րդ, 6.1-րդ, 24.2-րդ և 24.3-րդ հոդվածների դրույթներով, խնդրում եմ որոշում կայացնել ՀՀ Ազգային ժողովի հանրապետական կուսակցության պատգամավոր Շուշան Պետրոսյանի կողմից ՀՀ «Ազգային Ժողովի կանոնակարգ» օրենքի 6.1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված էթիկայի կանոնները խախտելու վերաբերյալ:

Կից ներկայացնում եմ 2016թ. հունվարի 11-ին www.armtimes.com կայքում հրապարակված ««Լսի, այ լակոտ, աչքերդ կհանեմ» Շուշան Պետրոսյան» վերնագիրը կրող նյութը:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Արայիկ Զալյան
azalyan@hcav.am
հեռ.՝ 077 651 647

«Լսի, այ լակոտ, աչքերդ կհանեմ». Շուշան Պետրոսյան

ՀՀ վաստակավոր արտիստ, ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավոր Շուշան Պետրոսյանի՝ վիրտուալ տարածքում կատարած վերջին գրառումներից մեկը աղմկահարույց է դարձել: Նա սպառնացել է հանել մեկ այլ օգտատիրոջ՝Գայանե Շահինյանի աչքերը, քանի որ աղջկա գրառումը դուր չի եկել իրեն:

Իսկ ամեն ինչ սկսվել է այն բանից, որ Գայանե Շահինյանը կարծիք է հայտնել, թե հակառակորդի գնդակից խոցված զինծառայող Արամայիս Յուրիկի Ոսկանյանի հարազատներին ցավակցելը դատարկ խոսքեր են: «Ինչ ցավակցել, դրանք դատարկ խոսքեր են, ով է հասկանում, թե հիմա ինչ ա կատարվում նրա հարազատների հոգում: ...Էս պետություն չի, երկիր չի, նողկում ես ազգից, իշխանություններից, պաշտպանության նախարարությունից, որ Սեյրան Օհանյանի նմանը կանգնի զոհված զինվորի գլխավերեւում ու ասի՝ մենք չկարողացանք քեզ պաշտպանել, թող հայոց հողը պաշտպանի: ...բա չես ամաչո՞ւմ, այ ողորմելի գեներալ, դուք եք ուտում ձեր զինվորների գլուխը, ոչ թե

թուրքը, անմեղ երեխեքը գնան սահման պահեն, իսկ ձեր հղփացած լակոտները ֆռֆռան, հա, էդ երեխեքի կյանքի հաշվին, էդ դուք պիտի հիմա պառկած լինեիք էդ անմեղ երեխեքի տեղը, այ էդքան չարացած եմ...»,- գրել է ֆեյսբուքյան օգտատեր Գայանեն:

Իսկ Շուշան Պետրոսյանը, նաեւ արձագանքելով մեկ այլ օգտատիրոջ՝ Գայանեին ուղղված գրառմանը՝ երկիրն իր ներկայությունից ազատելու մասին, գրել է. «Ու ինչքան շուտ ազատեք ձեր ներկայությունից, այդքան լավ, այ քեզ բան, ու Աստված չանի, Գայանե, որ էլի զոհեր լինեն, Աստված չանի որեւէ մեկը զգա այդ ողբերգությունը սեփական մաշկի վրա, ինչ եք ագռավի պես կռկռում ... այ քեզ չարախնդություն, այ քեզ.... բան»:

Գայանե Շահինյանը սրան ի պատասխան նշել է, որ հաշվի առնելով երգչուհու վաստակը՝ չի փորձի վիրավորել նրան, բայց նկատել է, որ նրա պահվածքը բնական է համարում ու որ նրա սիրտն ավելի չի ցավում, որքան իրենն ու մյուսներինը: «Լսի այ լակոտ, գրածներդ կարդացի ու գրածիդ այն 16 հավանություն տվող կենդանիներին էլ տեսա, ուշադիր լսի, չհամարձակվես այդ գարշելի երախդ բացել ու նման էժան ու հավուղեղ մակարդակի արտահայտվել Երկրիս, մեր բանակի, մեր Պաշտպանության Նախարարի մասին, ուշադիր լսի, աչքերդ կհանեմ ու ոնց ուզում ես արձագանքի, ԼԱԿՈՏ, կրկնում եմ աչքերդ կհանեմ !!!!»,- էլ ավելի է զայրացել Շուշան Պետրոսյանը:

http://armtimes.com/hy/read/77285